«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պ Ե Տ

N 04/032-1182

«07» 07 2014թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
պարոն Ս. ԿԱՐԱՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Կարայան

Կից Ձեզ ենք ներկայացնում «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ԳԲԽ-21/14 բողոքի վերաբերյալ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված եզրակացության պատճենը:

Առդիր՝ 14 թերթ:

Հարգանքով՝

պետի ժամանակավոր պաշտոնակատար Հ. ԹՈՒՆՅԱՆ

Կատարող՝
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժին
Ա. Գրիգորյան
հեռ. 28-93-28

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«7» հուլիսի 2014թ.

Հաստատում եմ
Գնումների աջակցման կենտրոնի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
Հ. Թունյան

Ն ԳԲԽ 21/14 բողոքը քննող
Հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. Ն 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից 19.06.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 19.06.2014թ. ներկայացված բողոքով «Մեծ Հիմք» ԱԿ-ն հայտնել է, որ մասնակցել է ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության կողմից հայտարարված «ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ՊԸԱՇՁԲ-10.09.01.04/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընթացակարգի հաղթող ճանաչել «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ին:

«Մեծ Հիմք» ՍՊԸ-ն նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «Գեվ-Էլլ Պլաստ» ԱԿ-ի հայտը բավարար գնահատելով, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 81-րդ, 82-րդ, 84-րդ կետերով սահմանված պահանջները՝ հետևյալ հիմնավորումներով.

«Մեծ Հիմք» ԱԿ-ն 13.06.2014թ. դիմում է ներկայացրել ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայությանը՝ խնդրելով տրամադրել Ընթացակարգի հաղթող ճանաչված «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի պատճենը:

Ուսումնասիրելով նշված հայտի պատճենը՝ «Մեծ Հիմք» ԱԿ-ն պարզել է հետևյալը.

1. «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված մասնակցի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու նպատակով ներկայացվել է՝

ա) «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի և «Ս. Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի միջև 04.12.2012թ. կնքված N «ՍԳԼ-ՇԱՁԲ-2» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագիրը, որի առարկան է հանդիսացել Շտապ օգնության հիվանդանոցի աչքի բաժանմունքի վերանորոգման աշխատանքները, իսկ աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է 2013թ. ապրիլի 30-ը:

բ) «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև 14.10.2013թ. կնքված N ՀՀՖՆ ՊԸԱՇՁԲ-13/01 ծածկագրով պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիրը, որի առարկան է հանդիսացել Մազմանյան 5 շենքի միջանցքների և աշխատասենյակների քանդման և վերանորոգման աշխատանքները, իսկ աշխատանքների կատարման ժամկետը սահմանվել է պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 45 աշխատանքային օր:

գ) «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի և Պտղավանի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի հիմնանորոգում Ծրագրի ԻԿ-ի միջև 29.08.2011թ. կնքված N TV-025 պայմանագիրը, որի առարկան է հանդիսացել ՀՀ Տավուշի մարզի գ. Պտղավանի միջնակարգ դպրոցի մարզադահլիճի հիմնանորոգումը, իսկ աշխատանքների կատարման վերջնաժամկետ պայմանագրով սահմանված չէ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 81-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե՝

ա) մինչև երեք հարյուր հիսուն միլիոն դրամ նախահաշվային արժեք ունեցող գնումների դեպքում, դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կողմերի հաստատած պայմանագրի (կամ պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:

«ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ՊԸԱՇՁԲ-10.09.01.04/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ նաև Հրավեր) 2.3 կետի համաձայն՝ մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է

պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման /նմանատիպ/ աշխատանքների կատարման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: Նմանատիպ են համարվում հիմնանորոգման, վերանորոգման աշխատանքների կատարումը:

- «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

2) նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն մասով նախատեսված պահանջները:

«Մեծ Հիմք» ԱԿ-ն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի մասնագիտական փորձառություն չափանիշը պետք է գնահատեր անբավարար հետևյալ պատճառաբանությամբ.

- «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի և «Ս. Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի միջև 04.12.2012թ. կնքված «ՍԳԼ-ՇԱՁԲ-2» ծածկագրով կապալային աշխատանքների գնման պայմանագրով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 2013թ. ապրիլի 30-ը, սակայն հանձնման-ընդունման արձանագրության ուսումնասիրությունից պարզվել է, որ աշխատանքների մի մասը հանձնվել են 31.04.2013թ., այսինքն՝ մեկ օր ուշացումով,

ինչը չի համապատասխանում Կարգի 81-րդ կետով և Հրավերով սահմանված պահանջներին:

- «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև 14.10.2013թ. կնքված «ՀՀՖՆ ՊԸԱՇՁԲ-13/01» ծածկագրով պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 45 աշխատանքային օր՝ 27.11.2013թ., սակայն հանձնման-ընդունման արձանագրության ուսումնասիրությունից պարզվել է, որ աշխատանքների մի մասը հանձնվել են 13.12.2013թ., այսինքն՝ 16 օր ուշացումով, ինչը կրկին չի համապատասխանում Կարգի 81-րդ կետով և Հրավերով սահմանված պահանջներին:
- N TV-025 պայմանագրով սահմանված չէ պայմանագրի գինը, աշխատանքների կատարման սկզբնաժամկետ և վերջնաժամկետը, բացակայում է պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը, կողմերի պարտավորություններին, ինչպես նաև պատասխանատվությանը վերաբերող որևէ պայման նշված պայմանագրում գոյություն չունի:

«Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ն նշված պայմանագրով նախատեսված աշխատանքների պատշաճ կատարումը հավաստելու նպատակով ներկայացրել է շինարարության ավարտական ակտ, որտեղ նշված չէ, թե երբ պետք է սկսվեին պայմանագրով նախատեսված աշխատանքները և երբ պետք է ավարտվեին, այսինքն՝ թե պայմանագիրը, թե նշված ավարտական ակտը չեն կարող համարվել Կարգի 81-րդ կետով սահմանված պահանջներին բավարարող պայմանագիր և պայմանագրով նախատեսված աշխատանքների պատշաճ կատարումը հավաստող փաստաթուղթ և անհասկանալի է, թե ինչպես է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը տվյալ պայմանագրին և պայմանագրով նախատեսված աշխատանքների պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթին արժանացրել դրական գնահատականի:

2. «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված մասնակցի «տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորելու նպատակով ներկայացվել է 20.01.2014թ. կնքված տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագիր, որի համաձայն՝ 20.01.2014թ.-26.11.2014թ. ընկած ժամանակահատվածում «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող շինարարական աշխատանքների ժամանակ Վանիկ Կոռյանը պարտավորվել է վարձակալությամբ վերջինիս տրամադրել 1988թ. արտադրության, ԶԻԼՄՄԶ-554Մ

մակնիշի 31 SU 789 պետհամարանիշի տրանսպորտային միջոցը՝ յուրաքանչյուր աշխատած օրը 10.000 ՀՀ դրամ՝ ներառյալ օրենքով սահմանված հարկերը, գումարով:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցներ:

Կարգի 82-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված՝ «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության մասին.

2) եթե հրավերով «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Հրավերի 2.3 կետի համաձայն՝ մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն մասով նախատեսված պահանջները:

- «Տեխնիկական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.3) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ՝ սույն հրավերով պահանջվող տեխնիկական միջոցների առկայության մասին՝ կցելով այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք վերջինս նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ: Ընդ որում, տեխնիկական միջոցների առկայությունը հիմնավորելու համար

Մասնակիցը ներկայացնում է դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները: Տեխնիկական միջոցների վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

N	Տեխնիկական միջոցի անվանումը	Տեխնիկական միջոցի մակնիշը, պետհամարանիշը, (եթե առկա է) և արտադրության տարեթիվը	Տեխնիկական միջոցի նկատմամբ իրավունքի տեսակը

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն մասով նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցներն են

Տեխնիկական միջոցի անվանումը	Տիպը	Պահանջվող քանակը
Բեռնատար ավտոմեքենա	ցանկացած	1

«Մեծ Հիմք» ԱԿ-ն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի տեխնիկական միջոցներ չափանիշը պետք է գնահատեր անբավարար հետևյալ պատճառաբանությամբ.

«Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված մասնակցի «տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը հիմնավորելու նպատակով ներկայացված 20.01.2014թ. կնքված տրանսպորտային միջոցի վարձակալության պայմանագրով սահմանված չէ, թե «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող կոնկրետ որ շինարարական աշխատանքների ժամանակ պետք է տրամադրվի վարձակալված տրանսպորտային միջոցը, այսինքն՝ հաշվի առնելով, որ Ընթացակարգով նախատեսված աշխատանքները պետք է սկսվեին մոտավորապես 2014թ. հունիսի 20-ից հետո, հետևաբար կարելի է ենթադրել, որ տվյալ տրանսպորտային միջոցը վարձակալվել էր այլ շինարարական աշխատանքների համար:

Բացի այդ, «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու հայտով չի ներկայացվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Հրավերով պահանջվող տեխնիկական միջոցի տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման

իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները, ինչը չի համապատասխանում Կարգի 82-րդ կետով և Հրավերով սահմանված պահանջներին:

3. «Գեվ-Էլլ-Պլաստ» ՍՊԸ-ի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված մասնակցի «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորելու նպատակով ներկայացվել է կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք, որի համաձայն՝ որպես հիմնական աշխատակազմում ներառված մասնագետներ են ներկայացվել Մանվել Սաշայի Հովհաննիսյանը և Վրեժ Պողոսի Հարությունյանը:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Կարգի 84-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված՝ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

2) եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	որակավո-րումը	աշխատանքային փորձը		գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները
		ժամանա-կահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5

1.				
2.				
..				

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Հրավերի 2.3 կետի համաձայն՝ մասնակցի որակավորումն այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն մասով նախատեսված պահանջները:

- «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.4) պայմանագրի կատարման համար նույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին՝ կցելով պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	Որակավորու-մը	աշխատանքային փորձը		գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները
		ժամանակա հատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.				
2.				
..				

Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները.

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն մասով նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են՝ շինարար-ինժեներ առնվազն մեկ մասնագետ. մասնագիտական աշխատանքային ստաժը պետք է լինի առնվազն 5 տարի:

«Մեծ Հիմք» ԱԿ-ն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի աշխատանքային ռեսուրսներ չափանիշը պետք է գնահատեր անբավարար հետևյալ պատճառաբանությամբ.

«Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված մասնակցի «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը հիմնավորելու նպատակով ներկայացված կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքին կցվել են Մանվել Սաշայի Հովհաննիսյանի և Վրեժ Պողոսի Հարությունյանի՝ պայմանագրի կատարման գործում ներգրավվելու մասին համաձայնությունները, որոնց մեջ նշված են, որ վերջիններս, ովքեր հանդիսանում են «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի աշխատակիցները, տալիս են իրենց համաձայնությունը «ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ՊԸԱՇՁԲ-10.09.01.04/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու դեպքում, հիշյալ պայմանագրի կատարման գործում ներգրավված լինելու մասին:

Նշված համաձայնություններին կցված են՝

• «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի և Մանվել Սաշայի Հովհաննիսյանի ու Վրեժ Պողոսի Հարությունյանի հետ 01.06.2009թ. կնքված աշխատանքային պայմանագրերը, որոնց համաձայն նշված պայմանագրերը ուժի մեջ են մտել կողմերի ստորագրման պահից և դադարել են 10.01.2010թ.:

• Մանվել Սաշայի Հովհաննիսյանի ու Վրեժ Պողոսի Հարությունյանի անձնագրերի պատճենները, որոնց մեջ առկա չեն վերջիններիս գրանցման հասցեները, ինչպես նաև

նշված անձնագրերը վավերական են համարվում համապատասխանաբար մինչև 19.06.2007թ. և 26.12.2006թ.:

Այսինքն, ստացվում է, որ վերը նշված համաձայնություններում արտացոլված այն տեղեկատվությունը, որ Մանվել Սաշայի Հովհաննիսյանը ու Վրեժ Պողոսի Հարությունյանը հանդիսանում են «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի աշխատակիցներ՝ չի համապատասխանում իրականությանը, քանի որ համաձայնություններին կցված աշխատանքային պայմանագրերի պատճենների ուսումնասիրությունից երևում է, որ վերջիններս 10.01.2010թ.-ից այլևս չեն համարվում «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի աշխատակիցներ:

Ինչ վերաբերում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Հրավերով պահանջվող տվյալ որակավորման չափանիշի գնահատման համար պահանջվող անձնագրերի պատճեններին, ապա հաշվի առնելով ներկայացված անձնագրերը դեռևս 2006թ. և 2007թ. կորցրել են իրենց վավերականությունը, հետևաբար դրանք չեն կարող համարվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատման համար պատշաճ փաստաթղթեր:

Ելնելով վերոգրյալից՝ «Մեծ Հիմք» ԱԿ-ն գտնում է, որ «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի հայտն այս չափանիշի մասով չի համապատասխանում Հրավերով և Կարգի 84-րդ կետով սահմանված պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Հրավերի 7.2.3 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխան հայտերը:

«Մեծ Հիմք» ԱԿ-ն խնդրել է դադարեցնել «ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ՊԸԱՇՁԲ-10.09.01.04/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և Ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչելու մասին, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին որոշումները:

2. ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը 23.06.2014թ. N 05/02/1461-14 գրությամբ «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ 2014թ. հունիսի 23-ին հրավիրվել է ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության «ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ՊԸԱՇՁԲ 10.09.01.04/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հերթական նիստ: Բողոքի հիմքում ընկած իրավական հիմքերի ուսումնասիրության արդյունքում որոշվել է դադարեցնել «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը, որի հայտարարությունը հրապարակված է նաև www.gnumner.am կայքում:

ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայությունը հայտնել է, որ ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման 75-րդ կետի պահանջով, վերոհիշյալի մասին տեղեկացրել է «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ս.թ. հունիսի 26-ը ներառյալ, շտկել որակավորման չափանիշներին առնչվող փաստաթղթերը՝ հրավերի պայմաններին համապատասխան:

ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայությունը նշել է նաև, որ «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում տեխնիկական անձնագրի պատճենը առկա է եղել հայտի «բնօրինակ» ծրարում, սակայն թյուրիմացաբար չէր պատճենահանվել «Մեծ Հիմք» ԱԿ-ին տրամադրելիս:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքում ներկայացված պահանջն ըստ էության կատարվել է, Պատվիրատուն խնդրել է բողոքը մերժել՝ կից ներկայացնելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 23.06.2014թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրությունը, որի 1-ին կետով որոշում է կայացվել «Մեծ Հիմք» ԱԿ-ի բողոքի հիմքում ընկած իրավական հիմքի ուսումնասիրության ընթացքում դադարեցնել «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչելու մասին, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին որոշումները:

3. ԳԲԽ-21/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-21/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ նաև Կենտրոն), ուսումնասիրելով «Մեծ Հիմք» ԱԿ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 19.06.2014թ. ներկայացված բողոքը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին 23.06.2014թ. ներկայացրած N 05/02/1461-14 գրությունը, «ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ՊԸԱՇՁԲ 10.09.01.04/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 23.06.2014թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 4 արձանագրությունը՝ հայտնում է հետևյալը.

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության կողմից հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ՊԸԱՇՁԲ 10.09.01.04/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների հայտ են ներկայացրել «Մեծ Հիմք» ԱԿ-ն և «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ն:

«Մեծ Հիմք» ԱԿ-ն 19.06.2014թ. ներկայացված բողոքով խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և հաղթող մասնակից ճանաչելու, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին որոշումները:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայությունը 23.06.2014թ. N 05/02/1461-14 գրությամբ ներկայացրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 23.06.2014թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրությունը, որի 1-ին կետով որոշում է կայացվել «Մեծ Հիմք» ԱԿ-ի բողոքի հիմքում ընկած իրավական հիմքի ուսումնասիրության ընթացքում դադարեցնել «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչելու մասին, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու մասին հայտարարությունը հրապարակված է նաև www.gnumner.am կայքում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից 19.06.2014թ. բողոքով Կենտրոնին ներկայացված ՀՀ ՏԿՆ միգրացիոն պետական ծառայության կողմից հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ՊԸԱՇՁԲ-10.09.01.04/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և հաղթող մասնակից ճանաչելու, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին որոշումները դադարեցնելու պահանջները բողոքի քննության ընթացքում դարձել են առարկայազուրկ, քանի որ մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունելը Պատվիրատուն դադարեցրել է «Գեվ-Էլլ Պլաստ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչելու, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին որոշումները, հետևաբար առաջարկում ենք «Մեծ Հիմք» ԱԿ-ի կողմից 19.06.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝
Պետի տեղակալ Է. Սարգսյան

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-21/14 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար Ա. Գրիգորյան